# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.02.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/02

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «THESAY PHARMA DRUG STORE» L.L.C ընկերության կողմից 11.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

**1. <u>«THESAY PHARMA DRUG STORE» L.L.C ընկերության ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«THESAY PHARMA DRUG STORE» L.L.C ընկերությունը (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 11.01.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրում առկա է հետևյալ նշումը. «Անհրաժեշտ է դաբաղի վիրուսների շտամների առկայությունը հաստատող փաստաթղթեր՝ տեղեկանք դաբաղի վիրուսի A տիպի G-VII գենետիկական գծի արտադրական A N2269/2015 շտամի առկայության վերաբերյալ, շտամի ավանդադրման մասին տեղեկանք և շտամի անձնագիրը» (այսուհետ՝ պայման):

Տեխնիկական բնութագրում նշված N2269/2015 շտամը հանդիսանում է կոնկրետ արտադրողի կոնկրետ արտադրանք և հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Վերը նշված պատվաստանյութը 2016թ. թվականից առ այսօր (բացառությամբ 2016թ. 2-րդ եռամսյակի) ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը մատակարարում է ՌԴ «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» դաշնային պետական բյուջետային հաստատությունը: 2016թ. 2-րդ եռամսյակում մատակարարումն իրականացրել է ՌԴ «Շչոլկովսկի բիոկոմբինատ» ԴՊՈՒՁ-ն:

Սակայն, 2017 թվականից վերը նշված պատվաստանյութի ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթների հրավերների տեխնիկական բնութագրում վերը նշված պայմանը ներառելուց հետո առ այսօր պատվաստանյութի մատակարար է հանդիսանում միայն ՌԴ «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոնն» դաշնային պետական բյուջետային հաստատությունը:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Կարծում ենք, որ վերը նշված պայմանը հակասում է վերը նշված իրավական նորմերի պահանջներին»:

Ընկերությունը 19.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47>> ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված N 2296-2015 շտամը հանդիսանում է բացառիկ սեփականություն, այն պատենտավորված, արտոնագրված է ՌԴ ՖԳԲՍ «ВХИИЗЖ»-ում, իսկ արտոնագրի համարն է՝ RU 2 640 261 C 1 (կայքի համապատասխան արտատպումը կցվում է):

Համաձայն «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի (նույն կարգավրումներն են գործում նաև ՌԴ-ում), պատենտավորման օրենքները տարածվում են հետևյալ օբյեկտների վրա.

1. Որպես գյուտ պահպանվում է ցանկացած բնագավառի տեխնիկական լուծում, որը վերաբերում է արտադրանքին (մասնավորապես՝ սարքին, նյութին, կենսատեխնոլոգիական արգասիքին):

2. Գյուտը ենթակա է իրավական պահպանության, եթե այն նոր է, ունի գյուտարարական մակարդակ և արդյունաբերորեն կիրառելի, եթե նույնիսկ դա վերաբերում է կենսաբանական նյութ պարունակող կամ դրանից բաղկացած արտադրանքին կամ եղանակին, որի միջոցով արտադրվում, ստացվում կամ օգտագործվում է կենսաբանական նյութ:

3. Իրավական պահպանության ենթակա չեն այն գյուտերը, որոնց առևտրային օգտագործման արգելումը Հայաստանի Հանրապետության տարածքում անհրաժեշտ է հասարակական կարգի կամ բարոյականության սկզբունքների պահպանման նպատակով:

4. Գյուտն արդյունաբերորեն կիրառելի է, եթե այն կարող է օգտագործվել արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության և այլ ոլորտներում:

5. Որպես օգտակար մոդել պահպանվում է նոր, ոչ ակնհայտ և արդյունաբերորեն կիրառելի այն տեխնիկական լուծումը, որը վերաբերում է արտադրանքին (մասնավորապես պիտույքներին, սարքերին, գործիքներին կամ դրանց մասերին, նյութին) կամ եղանակին (օգտակար մոդելի արտոնագրաունակության պայմաններ):

6. Որպես արդյունաբերական նմուշ պահպանվում է իրի արտաքին տեսքը բնորոշող այն լուծումը, որը նոր է և ինքնատիպ (արդյունաբերական նմուշի պահպանունակության պայմաններ):

Պատենտավորում իրականացնելու (արտոնագիր ստանալու) համար ՀՀ-ում նախ, հարկավոր է արտոնագրի հայտ լրացնել: Արտոնագրային հայտում սովորաբար նշվում է գյուտի անվանումը, ինչպես նաև գյուտին վերաբերող տեխնիկայի բնագավառը, այստեղ պետք է ներառվեն նաև գյուտի էության բնութագիրն ու գյուտի նկարագրությունը՝

անհրաժեշտ մանրամասներով, պարզ և հստակ շարադրված, այնպես, որ տվյալ բնագավառին միջին մակարդակով ծանոթ մարդը կարողանա օգտագործել կամ վերարտադրել գյուտը: Գյուտի էությունն ավելի հստակ բացահայտելու նպատակով այդպիսի նկարագրությունը սովորաբար ուղեկցվում է դիտողական նյութերով (գծագրեր, սխեմաներ կամ դիագրամներ): Հայտի մեջ նշվում են նաև տարբեր պայմաններ, օրինակ՝ տեղեկատվություն արտոնագրով տրամադրված պահպանության ծավալի մասին և այլն:

Գյուտի նկարագրությունը ներառում է տեխնիկական խնդիրը, որի լուծմանը նպատակաուղղված է գյուտը, տեխնիկական արդյունքը, որը կարելի է ստանալ գյուտի կիրառմամբ, տեղեկատվություն՝ տեխնիկայի մակարդակի կամ այլ տեխնիկական լուծումների մասին, որոնք հանրամատչելի են դարձել մինչև գյուտի առաջնության թվականը և հայտատուին հայտնի՝ պահանջվող տեխնիկական արդյունքի ստացմանը խոչընդոտող պատճառները, ինչպես նաև տեխնիկական խնդրի տեխնիկական լուծման նկարագրությունը: Գյուտի նկարագրությունը պետք է պարզ և հստակ բացահայտի գյուտը՝ տվյալ բնագավառի մասնագետի կողմից դա իրականացնելու համար բավարար չափով:

Վերոհիշյալը ապացուցում է, որ «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված N 2296-2015 շտամն արտոնագրված է ՌԴ ՖԳԲՈ«ВХИИЗЖ»-ում՝ համապատասխան սուբյեկտների կողմից (արտոնագրի համարն է՝ RU 2 640 261 C 1), այդ իսկ պատճառով նման շտամի օգտագործումը, արտադրումը այլ մասնակիցների կողմից հնարավոր չէ օրենքի ուժով:

Միևնույն ժամանակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով, «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է N 2296-2015 շտամը, որը արտոնագրված է ՌԴ ՖԳԲՈ«ВХИИЗЖ»-ում՝ (արտոնագրի համարն է՝ RU 2 640 261 C 1), իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի արգելում է գնման առարկայի հատկանիշները բնութագրելիս հղում պարունակել արտոնագրին:

Գտնում ենք, որ նման պայման պարունակող տեխնիկական բնութագիրը ուղղակիորեն հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, խախտում Օրենքի 3-րդ և

13-րդ հոդվածի կարգավորումները, ինչն իր հերթին հանգեցնում է գնման գործընթացի խտրական կազմակերպմանը, մասնակիցների շրջանակի սահմանափակմանը, մրցակցության սկզբունքի խախտմանը և այլն:

բ) Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված N 2296-2015 շտամը որևէ եղանակով (գիտական ուսումնասիրության կամ փորձաքննության արդյունքներով) օբյեկտիվորեն հիմնավորված չէ, և Պատվիրատուն որևէ կերպ չի հիմնավորել, որ հենց կոնկրետ այդ պահանջն է համարժեք իր կարիքին:

Մասնավորապես, որպես հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված N 2296-2015 շտամի անհրաժեշտություն, ոլորտի լիազոր մարմինը, նշում է, որ կարծում է, ոչ ճիշտ կլինի հենց նման շտամ պարունակող պատվաստանյութի ձեռքբերումը:

Պետք է նշել, որ նաև սույն բողոքի քննության ընթացքում Պատվիրատուն այդպես էլ չհիմնավորեց, թե օբյեկտիվորեն ինչով է հիմնավորված հենց այս շտամը պարունակող պատվաստանյութի ձեռքբերումը, և միայն այն է համարժեք Պատվիրատուի կարիքին, մինչդեռ «Щелковский комбинат» կազմակերպության կողմից ներկայացվել էր բազմակողմանի և մանրակրիտ վերլուծություն, որ A/G-VII/SAU 2015 շտամի օգտագործումը, նույնպես համապատասխանում է պատվիրատուի կարիքին:

Գտնում ենք, որ նման պայման պարունակող տեխնիկական բնութագիրը ուղղակիորեն հակասում է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջներին, քանզի վերոհիշյալ պայմանը օբյեկտիվորեն հիմնավորված չէ, այն հիմնված է միայն Պատվիրատուի վերացական, սուբյեկտիվ ցանկության վրա:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախարարակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հաշվի առնելով, որ Աճուրդով հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի <<բ>> պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է.Սարգսյանին խնդրում եմ պարտավորեցնել <<ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ նշված <<ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47>> ծածկագրով աճուրդը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

**2. <u>ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «THESAY PHARMA DRUG STORE» L.L.C ընկերության կողմից 11.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրվել է Բողոքներ քննող անձին ուղղված «THESAY PHARMA DRUG STORE» ընկերության բողոքը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրով պահանջվող՝ տեղեկանք դաբաղի վիրուսի A տիպի G-VII գենետիկական գծի արտադրական A N2269/2015 շտամի առկայության, շտամի ավանդադրման մասին տեղեկանքի (այսուհետ՝ Տեղեկանք) և շտամի անձնագրի վերաբերյալ:

Հայտնում եմ, որ 2016 թվականի համար ձեռքբերվող հակադաբաղային պատվաստանյութի տեխնիկական բնութագրում ներառված չի եղել Տեղեկանքի վերաբերյալ պահանջ, որը համաձայնեցվել է վերահսկողությունն իրականացնող լիազոր մարմնի՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հետ, հետևաբար 2016 թվականի երկրորդ եռամսյակում հաղթող է ճանաչվել ՌԴ «Шелковский биокомбинат» ФКП կազմակերպությունը:

Հարկ է նշել, որ Ծառայության 01.12.2016 թվականի N 01/10.1/3150-16 գրությամբ հիմնավոր ներկայացվել է հակադաբաղային պատվաստանյութի տեխնիկական բնութագրում նաև Տեղեկանքի վերաբերյալ պահանջ ներառելու հանգամանքը:

Միաժամանակ 2019 թվականի պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/42 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրով պահանջվող Տեղեկանքի վերաբերյալ ներկայացվում է Ծառայության 07.12.2018 թվականի N 04/10.1/7911-18 հիմնավորված գրությունը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արթուր Ապերյանը, Մելանյա Կարապետյանը և Տիգրան Մարկոսյանը:

**3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «THESAY PHARMA DRUG STORE» L.L.C ընկերության կողմից 11.01.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից Բողոքներ քննող անձին 16.01.2019թ. ներկայացված դիրքորոշումը.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերում ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են հետևյալ հատկանիշները. «Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ՝ բազմավալենտ, սորբինացված կուլտուրալ, ակտիվազրկված պատվաստանյութ, A Իրան 2005 և AG-VII, O Պան Ասիա -2, Ասիա 1, Sindh-08, տիպերի դեմ:

Արտաքինից իրենից ներկայացնում է բաց դեղնավուն գույնի հեղուկ, սպիտակ նստվածքով, որը թափահարելուց հետո հեշտ լուծվում է:

(Անհրաժեշտ է դաբաղի վիրուսների շտամների առկայությունը հաստատող փաստաթղթեր՝ տեղեկանք դաբաղի վիրուսի A տիպի G-VII գենետիկական գծի

արտադրական A N2269/2015 շտամի առկայության վերաբերյալ, շտամի ավանդադրման մասին տեղեկանք և շտամի անձնագիրը):

Պատվաստանյութը սրվակների մեջ է, մեկ դոզան 2 մլ, յուրաքանչյուր սրվակը 100մլ (50 դոզա):

Յուրաքանչյուր սրվակի վրա պետք է նշված լինի՝ պատվաստանյութի, արտադրող երկրի, կազմակերպության անվանումները, սերիայի համարը, պատրաստման և պիտանելիության ժամկետները և դոզաները:

Օգտագործման համար մնացորդային ժամկետը պետք է լինի 12 ամսից ոչ պակաս, իսկ պատվաստանյութի պահպանման և տեղափոխման ջերմաստիճանը +2° մինչև +8° C, PD50-6 միավորից ոչ պակաս:

Ջերմային ցուցիչների առկայությունը պարտադիր է: Պիտակի վրա նշված լինի «Պետական պատվեր» բառերը: Պատվաստանյութը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:

Պատվաստանյութը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժության մեջ օգտագործվող դեղամիջոցների ներմուծմանն ու փոխադրմանը ներկայացվող պահանջները»:

«THESAY PHARMA DRUG STORE» L.L.C ընկերությունը ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրում առկա պայմանը, համաձայն որի պատվաստանյութերի մատակարարը պարտավոր է ներկայացնել դաբաղի վիրուսների շտամների առկայությունը հաստատող փաստաթղթեր՝ տեղեկանք դաբաղի վիրուսի A տիպի G-VII գենետիկական գծի արտադրական A N2269/2015 շտամի առկայության վերաբերյալ, շտամի ավանդադրման մասին տեղեկանք և շտամի անձնագիրը, հակամրցակցային է և խտրական, քանի որ տեխնիկական բնութագրում նշված N2269/2015 շտամը հանդիսանում է կոնկրետ արտադրողի արտադրանք և հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Բողոքաբերը՝ հղում կատարելով համապատասխան իրավասու աղբյուրներից ստացված տեղեկատվությանը, հավելեց նաև, որ «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47» Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված N 2296-2015 շտամն արտոնագրված է ՌԴ ՓԳԲՄ«ВХИИЗЖ»-ում՝ համապատասխան սուբյեկտի կողմից (արտոնագրի համարն է՝ RU

2 640 261 C 1), այդ իսկ պատճառով նման շտամի օգտագործումը, արտադրումը այլ մասնակիցների կողմից սահմանափակված է օրենքի ուժով:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց՝ նշելով, որ Աճուրդի տեխնիկական բնութագրում սահմանված՝ դաբաղի վիրուսի A տիպի G-VII գենետիկական գծի արտադրական A N2269/2015 շտամի առկայության վերաբերյալ տեղեկանք տրամադրելու պահանջը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անասնաբուժության ոլորտի լիազոր մարմին հանդիսացող ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից նշված ոլորտում իրականացվող քաղաքականությունից բխող դիրքորոշմամբ: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ 2016թ. ՀՀ-ում բռնկված դաբաղի համաճարագային տարածումից հետո, գյուղատնտեսական կենդանիների դաբաղ հիվանդության դեմ արդյունավետ կանխարգելիչ պատվաստումներ իրականացնելու նպատակով վերոհիշյալ մարմնի կողմից առաջարկվեց գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծրագրի շրջանակներում նախկինում նախատեսված այլ տիպերի հակադաբաղային պատվաստանյութի փոխարեն ձեռք բերել A Իրան 2005 և AG-VII, O Պան Ասիա -2, Ասիա 1, Sindh-08 տիպերով արտադրված պատվաստանյութ, որը կպարունակի ՀՀ-ում անջատված համապատասխան համաճարակային շտամը:

Պատվիրատուի կողմից բողոքներ քննող անձին ներկայացվեցին ՀՀ գյուղատնտեսության նախարարին ուղղված՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 01.12.2016 թվականի N 01/10.1/3150-16 և 07.12.2018 թվականի N 04/10.1/7911-18 գրությունները, որոնցով ներկայացվել է հակադաբաղային պատվաստանյութի տեխնիկական բնութագրում նշված տեղեկանքի վերաբերյալ պահանջ ներառելու պայմանը:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ անընդունելի է համարում Ընկերության այն դիրքորոշումը, ըստ որի մրցութային պայմաններում Պատվիրատուն պետք է նշեր ոչ թե կոնկրետ շտամը, այլ ընդհանուր գենոտիպը, քանի որ այդ դեպքում կարող են լինել նաև ցանկացած այլ շտամեր, որոնք զգալիորեն կտարբերվեն ՀՀ-ում անջատված համապատասխան համաճարակային շտամից և դրանց հիման վրա ստացված վակցինայի կիրառումը ՀՀ-ում կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների:

Բողոքներ քննող անձի այն հարցադրմանը, թե արդյոք Աճուրդի շրջանակներում գնման ենթակա առարկան հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, այն է՝ Բողոքաբերի կողմից մատնանշված՝ ՌԴ «Կենդանիների առողջության համառուսական ԳՀԻ»-ից, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ նշված շտամն, ըստ էության, հանդիսանում է կենսաբանական

հումք, որը տեսականորեն կարող է ձեռք բերվել համապատասխան արտադրական հնարավորություններ ունեցող ցանկացած այլ տնտեսվարողի (արտադրողի) կողմից՝ գյուղատնտեսական կենդանիների դաբաղ հիվանդության դեմ կանխարգելող պատվաստանյութի արտադրման նպատակով:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն պնդմանը, որ դաբաղի վիրուսի N 2296-2015 շտամն արտոնագրված է ՌԴ «Կենդանիների առողջության համառուսական ԳՀԻ»-ի կողմից և հանդիսանում է վերջինիս բացառիկ սեփականությունը, ուստի և որևէ այլ արտադրող ընկերություն չի կարող այն ձեռք բերել, Պատվիրատու ներկայացուցիչն առարկեց, նշելով, որ յուրաքանչյուր արտադրական շտամ, որը ստացվում է որևէ կազմակերպության կամ գիտահետազոտական կառույցի կողմից՝ համարվում է նրանց բացառիկ սեփականությունը, ինչը չի կարող սահմանափակել նշված շտամի վաճառքը, փոխանակումը կամ այլ ընկերությանը տրամադրելու գործընթացը, որն էլ իր հերթին կարգավորվում է տվյալ երկրում գործող օրենսդրությամբ:

Նկատի ունենալով Բողոքի շրջանակներում Բողոքբերի կողմից վկայակոչված իրավական հիմքերը, մասնավորապես, Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգավորումը, համաձայն որի՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ (...) արտոնագրին, Բողոքներ քննող անձն Ընկերության ներկայացուցչին առաջարկեց մատնանշել Հրավերի տեխնիկական բնութագրում առկա՝ վերոհիշյալ իրավանորմով սահմանված պահանջներին հակասող՝ համապատասխան արտոնագրին կատարված հղումը, ինչին Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ հղում է կատարվել ոչ թե կոնրետ արտոնագրին, այլ՝ նշվել է շտամ, որն արտոնագրված է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը (...).

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրում առկա է հետևյալ պահանջը՝ անհրաժեշտ է դաբաղի վիրուսների շտամների առկայությունը հաստատող փաստաթղթեր՝ տեղեկանք դաբաղի վիրուսի A տիպի G-VII գենետիկական գծի արտադրական A N2269/2015 շտամի առկայության վերաբերյալ, շտամի ավանդադրման մասին տեղեկանք և շտամի անձնագիրը:

- Աճուրդի տեխնիկական բնութագրում սահմանված՝ դաբաղի վիրուսի A տիպի G-VII գենետիկական գծի արտադրական A N2269/2015 շտամի առկայության վերաբերյալ տեղեկանք տրամադրելու պահանջը սահմանվել է անասնաբուժության ոլորտի լիազոր մարմին հանդիսացող՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից:

- Բողոքաբեր ընկերության կողմից Բողոքներ քննող անձին չներկայացվեց որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ ՌԴ «Կենդանիների առողջության համառուսական ԳՀԻ»-ի կողմից արտոնագրված՝ դաբաղի վիրուսի արտադրական A N2269/2015 շտամը չի կարող ձեռք բերվել այլ ընկերության կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված գնման առարկայի բնութագրերը հաստատելիս՝ Հանձնաժողովի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձը

«THESAY PHARMA DRUG STORE» L.L.C ընկերության կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 11.01.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝**

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ